

Արձանագրություն 4

2014 թ. ապրիլի 5-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Հ. Զաքոյան/

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Գ. Բդեյան/

3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյան/

4.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ԲՖ դեկան Թ. Ասոյան /

5.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ԲՆՖ դեկան Մ. Ավագյան /

6.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հ. Զաքոյանը: Նա նշեց, որ ամբիոնն արդեն իրականացնում է նախորդ 2 ամբիոնների աշխատանքները, որն էլ իր հերթին պայմանավորեց գործելառճի վերակառուցում: Ներկայացվեցին առաջադիմության հետ

կապված խնդիրները, նկատելի է անկում «Ֆինանսներ» բաժնում: Ուշադրություն հրավիրվեց ցածր առաջադիմությամբ ուսանողների հետ անհատական աշխատանք կատարելու անհրաժեշտության վրա:

Գ. Բդեյանի հաշվետվությունը վերաբերում էր ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնում կատարված աշխատանքներին: Ամբիոնում քննարկվել և վերանայվել են կրթական ծրագրերը, ըստ անհրաժեշտության կատարվել են փոփոխություններ: Կատարվում են ծրագրային պահանջները, մեծ ուշադրություն է դարձվում հատկապես ոչ մասնագիտական բաժիններում անգլերենի ուսուցման որակի բարձրացմանը: Դասախոսական անձնակազմը համալրված է փորձառու մասնագետներով, որոնք պարբերաբար համատեղ ծրագրեր են իրականացնում արտասահմանյան բուհերի հետ, մասնակցում են վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացների: Աշխատանքներ են տարվում ամփոփիչ ատեստավորմանը լիարժեք նախապատրաստվելու ուղղությամբ:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբի-ոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյանը: Զեկուցողն անդրադարձավ ուսա-նողական համակազմի համալրման, սովորողների առաջադիմության, կազմա-կերպված միջոցառումների, ուսպլանների և ծրագրերի թարմացման հարցերին: Նշվեց, որ շատ բան է արված ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ, սակայն դեռևս կան հարցեր, որոնք պետք է լուծվեն ուսուցման գործընթացում:

1-ին կիսամյակում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ հանդես եկավ ԲՖ դեկան Թ. Ասոյանը: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ուսանողական համակազմում տեղի ունեցած փոփոխությունները՝ հատկապես կապված 1-ին կուրս ընդունելության հետ, այնուհետև անդրադարձավ ֆակուլտետի ուսանողների առաջադիմությանը՝ ըստ բաժինների ու կուրսերի, համեմատելով նախորդ ուստարվա համապատասխան ժամանակահատվածի հետ: Վերլուծվեցին և գնահատվեցին ամբիոնների, ֆակուլտետային ուսանողական ինքնակառավարման մարմին-ների կատարած աշխատանքները, կարևորվեց միջֆակուլտետային և ներֆակուլտետային միջոցառումների դերը ուսանողների գեղագիտական դաստիարակության մեջ: Թ. Ասոյանը նշեց, որ դեկանատի, ամբիոնների ուշադրության կենտրոնում են գտնվում այն ընթացիկ աշխատանքները, որոնք վերաբերում են ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզերին և ամփոփիչ ատեստավորման բարեհաջող կազմակերպմանը:

Գիտխորհրդում լավեց նաև ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունը, որտեղ զեկուցողն անդրադարձել էր ինչպես նախորդ զեկուցման մեջ արձարծ-ված ինչպես ընդհանուր, այնպես էլ միայն բնագիտական ֆակուլտետին վերաբերող հարցերի: Աշխատանքները, ըստ զեկուցողի, կատարվել են բարեխղճորեն և զարգացման հայեցակարգին համապատասխան: Կան որոշ խնդիրներ՝ կապված լաբորատորիաների կահավորման հետ:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարմանը, լրացուցիչ խորհրդատվությունների անցկացմանը: Առանձնակի ուշադրություն դարձվեց հանրակրթական դպրոցների և քոլեջների հետ համագործակցության հարցերին: Նիստին ներկա էր Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Հակոբյանը, որը, նույնպես անդրադառնալով բուհ-դպրոց փոխադարձ կապին, կարևորեց համագործակցության հուշագրի կնքումը՝ համագործակցությունը ավելի սերտ ու արդյունավետ դարձնելու նպատակով: Այնուհետև տեղի ունեցավ հուշագրի կնքման արարողությունը:

Հիմք ընդունելով՝ հաշվետվությունները, ելույթները և արված առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

- 1.ԳՊՀ ՏՖ կատարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Հ. Զաքոյանի հաշվե-տվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. ԳՊՀ ԲՖ օտար լեզուների ամբիոնի վարիչ Գ. Բդեյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 3.ԳՊՀ ՏՖ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
4. ԳՊՀ ԲՖ դեկան Թ. Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 5.ԳՊՀ ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

6. Հաստատել Գավառի պետական համալսարանի և Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի միջև կնքված համագործակցության հուշագիրը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան